ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Ըսի եւ դարձեալ կ'ըսեմ . այս չորեքշաբթի օրն եկած էր բողո- քագիրը, երէկ ալ ժամանակ չունեցայ դայն կարդալու . կարծեցի թէ գործադիր Վարչու- թեան անմիջապէս ներկայելի էր այդ խնդիրը . իսկ այսօր երբ այդ յուշարար գիրն ստացայ, որով իւր բողոքագիրն Երեսօր ժողովին մէջ

կարդացուելու կը խնդրէր, պարտք համարեցի ժողովոյ յայտնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խօսքն Իֆէօճեւնն էֆէն- տինն է կալուածոց դիւանի տեղեկագրին վրայ : Իֆէօճեւն Հ. ԷՖ.— Նորէն կը հարցնեմ, ո՞ր խնդրոյն վրայ պիտի խօսիմ . նախ՝ ժողո- վը պէտք է Օրակարգն որոշէ :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Խօսք առի Օրա- կարգին վրայ դիտողութիւն մ'ընելու համար : — Ազգային խնդրոց ընդհանուրին ալ կար- գադրութեան կարեւորութիւնն ոչ մէկ երես- փոխան մը կրնայ ուրանալ . բայց միջանկեալ խնդիրներ յաջորդին ձգելը ժամավաճառ ընել է . անցեալ նիստին մէջ երբ Սահմանադրու- թեան վերաքննութեան խնդրոյն վրայ վիճա- բանութիւնն սկսաւ, ատենանի փակման ժա- մը հասնելուն համար այս վիճաբանութիւնը մի- ջանկեալ մնաց, եւ մինչդեռ նոյնին շարունա- կութեամբն այսօր պիտի լուսաբանուէր խըն- դիրը, կը տեսնեմ որ արդէն բացուած խնդիր մը ետ մնացեր է եւ կալուածոց դիւանին տե- ղեկագիրն առաջին եզեր է . շատ կարելի է որ այս տեղեկագրին վրայ այսօր չկրնայ որո- շում լինիլ, որովհետեւ դեռ անոր խօսքը նոր պիտի բացուի, մինչդեռ միւսն արդէն նկա- տողութեան առնուած եւ վիճաբանութիւնն սկսած է նախորդ նիստէն ի վեր, յորում վեր- ջին ատենաբանն ես էի, երբ ժամը 10 ին հաս- նելով ատենանը փակուեցաւ, մնացեալը յաջոր- դին մէջ շարունակելու թէութեամբ : Բայց հիմա դարմանօք կը գիտեմ որ Գիւանն ելեր այս խըն- դիրն երկրորդ կ'ընէ եւ ուրիշ մը առաջին կը դնէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Արդէն Իֆէօճեւնն է- ֆէնտիի հարցման առթիւ պատասխանեցի թէ Օրակարգը ժողովով որոշուած է եւ ոչ Գիւա- նին ինքնուրոյն տնօրէնութեամբը :

ԽԹԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Օրակարգին վրայ խօսք կ'ուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Օրակարգին վրայ խօսք չկայ . խօսքը՝ կալուածոց դիւանի տեղեկագ- րին վրայ է եւ առաջին խօսքն Իֆէօճեւնն է- ֆէնտիինն է : Իֆէօճեւն Հ. ԷՖ.— Պիտի խօսիմ տեղե- կագրին վրայ, երբ կարգն անորն ըլլալուն վը- րայ ժողովին հաստատուն կամքն իմանամ, զոր տակաւին չկրցայ իմանալ : Գիւանը չկրնար բաց- ուած խնդիր մը գրցել եւ ինքնին ուրիշ խընդ- րոյ մը առաջնութիւն տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախորդ նստին Գիււ-
նըն ատենանի փակման ժամանակ օրակարգը
պատրաստելով կարողաց ժողովին մէջ, եւ դի-
տողութիւն ընող չըլլալուն ընդունուած կը
համարուի: Ուստի այսօր էլնել այսպիսի դի-
տողութիւն մ'ընելն անպատեհ կը գտնեմ:

ՆԱՍԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Այս միջոցէս
չուտով վերջ տալու համար բան մը պիտի ա-
ռաջարկեմ. թէ որ օրակարգին մէջ փոփոխու-
թիւն պիտի մտնէ, կ'առաջարկեմ որ ազգային
արոց խնդիրն ամենէն առաջ անցնի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախագահ Սրբազանին
առաջարկութեան վրայ եթէ զիտողութիւն ընող
չըլլայ, յաջորդ նիստին օրակարգը կ'անցնի:

ՁԱՅՆԵՐ.— Ազգային արոց ծրագիրն ար-
դէն նախաքննութեան յղուած ըլլալով, անկէ
գալիք տեղեկագրին պիտի սպասուի Օրակար-
գըն անցնելու համար:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ.— Ներեցէք, Ատենա-
պետ էֆէնտին, խօսք մ'ալ ընել. մինչեւ հի-
մա խնդրէն դուրս եղած բոլոր այս խօսքերը
տեղի չէին ունենար թէ որ հաճէիք ամենէն
առաջ իմ յարուցած զիտողութեան վրայ ժո-
ղովին կամացը դիմել, եւ ըսի արդէն թէ եր-
կու խնդրէն մըն ալ ըլլայ՝ պատրաստ եմ ա-
նոր վրայ խօսելու. բայց ժողովոյն կամքը
կ'ուզեմ իմանալ թէ մը խնդրոյն առաջնու-
թիւն պիտի տայ. նորէն կը խնդրեմ՝ հարցու-
ցէք ժողովին թէ նախընթաց նիստէն բացուած
վիճարանութիւնը կ'ուզէ շարունակել, թէ ոչ՝
ուրիշ նոր խնդրոյ մը անցնիլ: Մինչեւ որ այս
հարցման պատասխանը ժողովէն չընդունիմ,
չպիտի կրնամ խղճի եւ սրտի հանդարտու-
թեամբ խօսքս շարունակել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ինչպէս պահ մ'առաջ
ըսի, նորէն կ'ըսեմ թէ նախորդ նիստին փակ-
ման ժամանակ Օրակարգ մը որոշուեցաւ եւ
զիտողութիւն ընող չեղաւ. այսօր կ'իջնէք Օ-
րակարգին մէջ փոփոխութիւն մտցնել կ'ու-
զէք, ցաւօք սրտի կը յայտնեմ թէ չեմ կրնար
ընել զայդ:

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Ոչ. կը սխալիք Ա-
տենապետ էֆէնտի. . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կաղաչեմ, Շահագեան
էֆէնտի, խօսքը ձերը չէ:

(Պահ չէ շէրի կէ րէրէ ժողովին մէջ):

ՆԱՍԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Ես կը յիշեմ որ
նախորդ նստին երբ Սահմանադրութեան վե-

րաքննութեան վրայ խօսք բացուեցաւ, Շահ-
ագեան էֆէնտին՝ բանի որ որոշուեցաւ,
եւ ալ պիտի խօսէ ըսելով՝ եղած առաջարկու-
թիւն մը պաշտպանեց, եւ տակաւին նոյն
նիւթին վրայ խօսելիք ունիմ ըսաւ, որ չէ ար-
ձանագրուած, եւ կարծեմ արձանագրուած
չըլլալուն համար է որ այսպիսի երկար խօս-
քեր կ'ըլլան այսօր:

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Քանի որ վերա-
քննութեան խնդիրը նախորդին մէջ բացուած
բայց որոշուած չէր առած, ըսել է թէ պիտի
չարունակուի. այս կ'ուզէի ըսել:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ.— Խօսք կ'ուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Արդէն խօսքը ձերն է.
Կալուածոց դիւանին տեղեկագրոյն վրայ առա-
ջին խօսք ուղած էք, կրնաք խօսիլ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ.— Եթէ կը պնդեմ որ
Օրակարգը նախ ժողովով որոշուի, մասնաւոր
կամ անձնական գիտման մը համար չէ: այլ
նպատակս այն է թէ պէտք չէ որ ապօրինի
կամ անկանոն կերպով վարուինք: Ատենապետ
էֆէնտին ըսաւ թէ նախորդ նստին փակման
ատեն Օրակարգն որոշուած է. մեր է, այդ որո-
շուածը ցուցնէք:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ.— Եթէ որոշում կը
փնտրուէք, այդ որոշումը ժողովն հիմա ալ
ըրաւ նախորդ նստին ատենագրութիւնը վա-
ւերացնելովը, առանց Օրակարգին վրայ զիտո-
ղութիւն մ'ընելու:

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Ոչ. մեք Օրակար-
գը չը վաւերացուցինք:

Այս միջոցին շատ մը երեսփոխաններ ա-
ռանց Դիւանէն խօսք առնելու իրարու հետ
խօսիլ սկսան:

Ատենապետ էֆէնտին յառթեան հրաւէր
կարգաց յայտնելով որ եթէ ասանկ՝ առանց
կարգաւ խօսք առնելու խօսիլը շարունակեն,
պիտի ստիպուի ատենը դոցել: Երբ հանդար-
տութիւնը վերահաստատուեցաւ, Ատենապետ
էֆէնտին ազգարարեց Իֆէկճեան էֆէնտինին
թէ կալուածոց դիւանին տեղեկագրոյն վրայ
խօսքն իրն է:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ.— Սահմանադրութեան
վերաքննութեան վրայ խօսք ուղած էի նա-
խորդ նստէն: Մինչեւ որ ժողովն օրինաւորա-

պէս որոշում չընէ եւ չյայտնէ թէ վերաքննու-
թեան վրայ բացուած վիճարանութիւնը մէկրի
ձգելով կալուածոց դիւանին տեղեկագրոյն ա-
ռաջնութիւն տալ կ'ուզէ, իրաւունք չունիմ
նոյն տեղեկագրին վրայ խօսիլ. վասն զի չեմ
ուզեր Դիւանին քոնած ապօրինութեանը մատ-
նակցիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Եթէ ուրիշ խօսող չկայ,
Կալուածոց դիւանին տեղեկագիրը քու էի պիտի
դնեմ:

Ձայս ըսելով Ատենապետ էֆէնտին կար-
գաց յիշեալ տեղեկագրին եզրակայութիւնը,
եւ կանոնադրութեան 46 յօդուածին համաձայն
ձերմակ եւ սեւ գնտակներն երեսփոխանաց
ցրուել տալով հրաւիրեց ի գաղտնի քուէար-
կութիւն:

Սոյն միջոցին երեսփոխանաց մէկ մասը
մեկնեցաւ ժողովարանէն:

Ատենապետ էֆէնտին տեսնելով թէ մը-
նացելոց թիւն անբաւական է քուէարկութիւն
կատարել, այս քուէարկութիւնը դադարեալ
հրատարակեց, եւ յայտնեց թէ ուրիշ օրուան
պէտք է մնայ այս մասին որոշում տալը:

Ժամը 9 ին ատենը քառորդ մը դադար
առաւ, եւ յետոյ վերստին բացուեցաւ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՄՐԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քառորդ մ'առաջ երբ
Կալուածոց դիւանին տեղեկագրոյն վրայ քուէ-
արկութիւն պիտի լինէր, երեսփոխանաց մէկ
մասին մեկնելուն պատճառաւ կանոնադրու-
թեան 49 յօդուածին համեմատ ստուգեցինք
որ անձնական ներկայութեան մեծամասնութիւն
չէ մնացած. ուստի տեսնելով որ նիստը լիովին
բաւական չէ քուէարկութեան ձեռնարկելու,
գոցեցինք այն խնդիրը ուրիշ նիստի թողով:
Ուրեմն կ'անցնինք հիմա միւս խնդրին, այն է
Սահմանադրութեան վերաքննիչ Ցանձնաժողո-
վոյ Մրագրին վիճարանութեանը. թէ եւ հիմա
ալ երեսփոխանաց անձնական ներկայութիւնը
պէտք եղած թաւով չէ. բայց ըստ որում Օրա-
կարգը վիճարանելի խնդիր մ'է, խօսք ուղղ-
ներուն կրնամ խօսք տալ, խօսքը Ալաճաճեան
էֆէնտինն է:

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ.— Վերաքննութեան
խնդիրն այսօր չկրնար նայուիլ. որովհետեւ
ըլի մ'առաջ նախաձեռնութեան դիւանին ան-
դամներէն Ռուսինեան եւ Պատնասեան էֆէն-
տիները զիտողութիւն ըրին իրենց դիւանին
կողմէ եկած տեղեկագրին համար ըսելով թէ
թերի եւ անկատար կերպով ներկայացեր է.
ուստի կ'առաջարկեմ որ նոյն տեղեկագրին ետ
դարձնելով նոր եւ կատարեալ տեղեկագիր մը
ուղուի յիշեալ դիւանէն:

ԿՐՃԻԿԵՍՆ Յ. ԷՖ.— Ես ալ նոյնը պիտի
ըսեի՝ ինչ որ Ալաճաճեան էֆէնտին ըսաւ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԵՉՄԻՐԼԵՍՆ.— Նախա-
ձեռնութեան դիւանին անդամներէն Պատնաս-
եան էֆէնտին յայտնեց թէ ինք ստորագրեր է
եւ երկու անգամ պարունակութիւնն ընդուներ
են, որ դիւանին մեծագոյն մասն են, միւս
կողմէն Ռուսինեան էֆէնտին ալ դէմ զիտո-
ղութիւն մը չըրաւ. ինչպէս կ'երեւայ ներկա-
յացման ձեւէն, որ դեկտ. 20 ին դրուեր եւ
Պատնասեան էֆէնտին ստորագրուեր, եւ
յունվար 17 ին ներկայացուեր է, այսքան մի-
ջոցի մէջ նոր զիտողութիւն մ'ալ չէ եղած. . .

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ.— Ես չըսի թէ տա-
կաւին չստորագրեցի. այլ ստորագրեցի զիւս-
նին ատենապետին ներկայացուելու համար:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ.— Բայց դիւանին ատե-
նապետը չէ ստորագրեր եղեր, ինչ կ'իջնէ ատ-
կէ. անգամ մը ստորագրելէ ետեւ երբ կ'ընէ
թէ ստորագրեցի մեր ատենապետին ներկայաց-
ուելու համար եւ թէ տակաւին պակասներ
կան, անընդունելի է. չեմ կրնար հասկընալ
զայս. միթէ ստորագրած օրը Ատենապետ է-
ֆէնտին ներկայ չէր կամ չէր գիտեր որ տե-
ղեկագիրը դուք ստորագրեցիք. երբ տեղեկագիր
մը կ'ստորագրուի, լրացած գործ կ'ըլլայ չիմա
ալ սկսուած խնդիր մը երեսփոխանական ժողո-
վէն դուրս հանել կ'ուզեն. հանելուկ մ'է այս:

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Այս առթիւ Պառ-
նասեան էֆէնտի ըսածը ճշմարիտ կը գտնեմ
եւ ներկայացեալ տեղեկագրին ետ դրկելու հա-
մար եղած առաջարկութեան կը ձայնակցիմ.
վասն զի այս տեսակ սխալումներ կրնան պա-
տահիլ ժողովոյ կամ դիւանի մը մէջ. քանի որ
Պատնասեան էֆէնտին պայմանաւ ստորագրած
ըլլալը կը խոստովանի, եւ քանի որ նոյն դի-
ւանին ատենապետ Ռուսինեան էֆէնտին թէ-
եւ տեղեկագրին պարունակութիւնը չթխտեց,

բայց ըստ թէ տեղեկագրերի մասին սխալ մը կայ, դիւանը չէ ընտրած զՓափազեան էֆէնտին, ուրեմն չկրնար ընդունուիլ այդ տեղեկագիրը, եւ պէտք է ետ դրկուի:

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Խնդիրը պարզ է. քանի որ կը տեսնենք թէ Նախաձեռնութեան դիւանին անդամներն անհամաձայն են այս տեղեկագրի մասին, նոյն իսկ ատենապետին կ'ըսէ թէ՛ հաւանութիւն չունէի ժողովին ներկայացուելուն եւ թէ վերջին նիստ մը պիտի ընէինք տեղեկագրին ընթերցման համար, միւս կողմէ մէջերնուն մի կրնանք ճանչնալ տեղեկագրեր, քանի որ տեղեկագրերը բացառութեամբ ստորագրեր է, եւ քանի որ անհամաձայնութիւնը տիրած է մէջերնին, ես ալ կ'առաջարկեմ որ ետ դրկուի, որպէս զի համաձայնին եւ այնպէս բերեն:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Տեղեկագրին ետ յըղելու առաջարկութեան կը ձայնակցիմ:

ՀՈՎՈՒԵԱՆ Ղ. ԷՖ. — Ես ալ կը կրկնեմ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԻՍԿԵՆՏԷՐԵԱՆ. — Տ.

Մատթէոս վարդապետին ըսածներուն ըստ ամենայնի համամիտ եմ. արդէն ինչպէս Պառնասեան էֆէնտիին նոյնպէս դիւանին ատենապետ Ռուսինեան էֆէնտիին տուած բացատրութիւնները բաւական նշմարել կուտան թէ տեղեկագրին ընդունած են. միայն տեղեկագրերի մասին անհամաձայն են, զայն ալ Ռուսինեան էֆէնտիին ներկայացուց, որ է Պառնասեան էֆէնտիին. ուրեմն ասոր համար չարժէք տեղեկագրին ետ դարձնել եւ ժամանակ կորսնցնել. ըստ իս քուէի դրուելով կրնայ այս կնճիռն անմիջապէս վերջանալ:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Տեղեկագրին մէջ իմ ստորագրութիւնս տեսնելով պահ մ'առաջ մեղադրողներ եղան թէ խնդիրն ուրիշ կերպ եղած լինի. ուստի հարկ կը համարիմ քանի մը բացատրութիւն տալ: Խնդիրը տեղեկագրին պարունակութեանը վրայ չէ. պարունակութեանը մասին ես ալ ատենապետն ալ համամիտ ենք. խնդիրը հասկնալով ներկայացման վրայ է. քանի որ գործին մէջ հասկնալ մտած է՝ այս դիտողութիւնները կրնան ըլլալ. քիչ մ'առաջ բողոքագիր մը եկած էր. Կանոնադրութեան մէջ սահմանուած ձեւերը կատարուած չըլլալուն համար չը կարգացուեցաւ եւ ետ մնաց. նոյնը կրնամ ըսել նաեւ այս խնդրոյն մէջ. խորհրդարանական ձեւերու մէջ

երբ դիւան մը տեղեկագիր կը չինէ, նախ Ատենապետը կ'ստորագրէ եւ յետոյ անդամները, մեր տեղեկագրին ներկայացուած ասանկ եղած չէ. Փափազեան էֆէնտիին ըսաւ ինձ. « դուն ստորագրէ, ետքը ատենապետին կը դրկեմ եւ անոր հաւանութիւնն ստանալէն ետեւ կը ներկայացնենք »: Բայց փոխանակ նորէն մեր դիւանին ներկայացնելու, ինք ալ իւր դիտողութիւնն ըրեր եւ ինքզինքն ալ տեղեկագրեր նըշանակելով ներկայացուցեր է ժողովին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գիտէք երեսփոխան էֆէնտիներ, Պառնասեան էֆէնտիին ինչ ըսել կ'ուզէ, բացատրելու կատարելով. թէ եւ ես ստորագրեր եւ յանձներ էի տեղեկագիրը, թէ եւ մեծամասնութիւն կար դիւանի անդամոց ստորագրութեան մէջ, թէ եւ երեքնիս ալ տեղեկագրին պարունակութեանը համամիտ էինք, բայց Փափազեանը պարտական էր չ'ներկայացնել տեղեկագիրը, երբ ժողովին Օրակարգն էր վերաքննութեան խնդիրը իրեւ միմիայն վիճաբանելի խնդիր, եւ թէ ինք եւ թէ Ռուսինեան էֆէնտիին նոյն նստին բացակայ կը մնային: Սակայն չըսէր թէ ինչ պէտք էր ինձ ըսել, եթէ ժողովը Նախաձեռնութեան դիւանին նոյն օրը հարցնէր թէ ինչ ըրաւ իրեն յանձնուած գործին զննութիւնը. պատուիրած էին ինձի որ տեղեկագիրը չ'ներկայացնեմ, կամ եթէ նոյն նստին ներկայ պիտի չըգտնուէին, գէթ երկտող գրով մը իրենց կամքը ինձի ծանուցած էին. ուրեմն ինչպէս կըրնայի չ'ներկայացնել զայն, որ արդէն երեքնուս հաւանութեամբը պատրաստուած էր, եւ միայն իմ եւ Ռուսինեան էֆէնտիին ստորագրութիւնը կը պակսէր: Ես ալ նախընթաց նստին մինչեւ ատենի բացման ժամը սպասեցի Ռուսինեան էֆէնտիին. երբ նա չեկուցաւ, այն ատեն ստորագրեցի դիւանին գրասեղանին վըրայ. ինչպէս տեսաւ Տ. Մատթէոս վարդապետ եւ յանձնեցի Ատենապետ էֆէնտիին, Պառնասեան էֆէնտիին պայմանաւ չ'ստորագրեց, այլ ամբողջապէս իրբեւ լմնցած գործ ստորագրեց եւ յանձնեց ինձի. եւ պէտք է ըսեմ թէ թաղային ժողովոյ առաջարկութեան մասն ալ Ռուսինեան էֆէնտիին խմբագրութիւնն եւ Պառնասեան էֆէնտիին պարտութիւնն է, որ աւարտած էր դեկտ. 20 ի նստին, որուն ատենապետութիւնը Ռուսինեան էֆէնտիին կը վարէր: Երբ նոյն նստին խնդիրը բացուէր, տեղեկագիրն ալ պիտի ներ-

կայանար. բայց ըստ որում խնդիրը նոյն օրը չբացուեցաւ. Ռուսինեան էֆէնտիին դիտողութիւն ըրաւ թէ մինչեւ դալ նիստ ժամանակ ունեցանք նորէն մէկտեղելու. եւ երկուքն ալ Ա շարքի մէջ չեկուցան բնաւ. յաջորդ նիստին որ է նախընթաց նիստը՝ չեկան. ես ալ նոյն օրը ատենապետը բացուելու միջոցին ստորագրեցի եւ յանձնեցի Ատենապետ էֆէնտիին: Ըսածներէս կ'երեւի որ ես սպասեր եմ Ռուսինեան էֆէնտիին. բայց չէի համարձակեր որ ժողովը ալ սպասեցնէի. ասանկ բան դեռ նոր կը տեսնուի: Չեմ հասկնար ինչ ըսել կ'ուզեն. կ'ընդունին թէ պարունակութեանը վրայ ամէնքս ալ համամիտ ենք. ուրեմն ինչ կը մնայ դուրը. տեղեկագրերի մասը. ով կ'ըսէ թէ ես տեղեկագրերու թիւնն ընդունած եմ. տեղեկագրին իմ ձեռքովս ներկայացուելուն համար դիւանագիրը զիս տեղեկագրեր նշանակեր է, եւ իրօք ալ նոյն աւուր տեղեկագրերն եմ. բայց իբրեւ տեղեկագրեր ստորագրած եմ: Եւ ինչ բանի տեղեկագրութիւնը պիտի ընէի. ժողովս Սահմանադրութեան համաձայն Ա երաքննիչ Յանձնաժողով մը դրած է, որ երկար ժամանակ աշխատասիրելով ընդարձակ տեղեկագիր մը եւ փոփոխելի տրամադրութեանց ծրագիր մը բերած է եւ իր յատուկ տեղեկագրերն ունի անշուշտ. Նախաձեռնութեան դիւանն իր առաջարկած քանի մը բարեփոխութեանց համար տեղեկագրերի ինչ պէտք կրնայ ունենալ. շատ շատ իր նոր առաջարկութեանը համար տեղեկագրեր մը պիտի նշանակէ, որ պաշտպանէ զայն. այդ տեղեկագրերն ալ ես չէի կրնար ըլլալ, որովհետեւ այդ առաջարկութիւնն արդէն ընդունած չեմ որ կարենամ պաշտպանել զայն. կամ Ռուսինեան էֆէնտիին եւ կամ Պառնասեան էֆէնտիին պիտի ըլլար. քիչ մը առաջ Ռուսինեան էֆէնտիին զՊառնասեան էֆէնտիին տեղեկագրեր ցուցուց. ալ ինչ խնդիր կը մնայ. ժողովին ժամերը գոնէ պէտք է խնայել:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իմ ըսելիքս միայն մէկ կէտին վրայ է. անկանոնութեան գլխաւոր կէտը տեղեկագրերի խնդիրն է. Նախաձեռնութեան դիւանը առաջարկութիւն մը կը ներկայացնէ եւ անդամներէն մէկը զայն չընդունիր ու կը հերքէ. ինչպէս կարելի է որ այդ անգամը տեղեկագրեր ըլլայ՝ երբ պիտի պաշտպանէ բերած տեղեկագիրը. միթէ հերքողը տեղեկագրեր կրնայ ըլլալ:

ԷՖՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Այս դիտողութիւնք բնաւ տեղի չունին այսօր. կրճիկեան էֆէնտին եւ մէկ քանի երեսփոխանք թերեւ իրաւունք ունենային՝ թէ որ անցեալ նիստին ընէին իրենց դիտողութիւնները, երբ տեղեկագիրը ներկայացաւ: Նոյն օրը այսպիսի դիտողութիւն ընող չեղաւ. ժողովն ընդունեց, եւ վիճաբանութիւնն անոր վրայ բացուեցաւ. եղած սխալ մ'ալ իբրեւ ատենագրական դիտողութիւն Ռուսինեան եւ Պառնասեան էֆէնտիները Ատենագրութեան ընդունելութեան միջոցին ներկայացուցին եւ արձանագրուեցաւ. հիմա խնդրոյն վրայ կրնանք վիճաբանիլ, տեղեկագրեր ճանչնալով այն անձը, զոր դիւանը կը ներկայացնէ մեզ: Ռուսի շատ անտեղութիւն է հոս եկած խնդիր մը նորէն ետ դարձնելու մասին այսչափ խօսիլն անգամ:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ թէ իւրաչիւր դիւան իրեն յանձնուած գործոց անթերի կարգադրութեան համար նուիրական պարտաւորութիւն ունի. մենք պարտաւոր ենք այդպիսի վաստակաւորաց համար չ'նորհակալուելու յայտնել. այսու ամենայնիւ այս տեղեկագրեր՝ որ ներքին անհամաձայնութեան առիթ է տուեր, եթէ արատաւոր է, պէտք է յետոյ դարձնել:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՞րն է արատը:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկագրերի խընդիրն է:

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ. — Տ. Ամբոսիոս վարդապետ ըսաւ թէ Ռուսինեան էֆէնտիին ուրիշ խօսք չըրաւ բայց միայն սխալ մ'ուզեց ըսելով թէ տեղեկագրեր չէր կրնար ըլլալ այն անձը՝ որ բացառութեամբ ստորագրած է: Գործը քանի մը անձանց ներկայութեան յայտնեց թէ համամիտ չէր եւ չէ նոյն տեղեկագրին, եւ թէ քանի որ տեղեկագրին ալ ինք ստորագրած չէ եւ տեղեկագրերին ալ որոշուած չէ, չկարծեր որ ժողովը ալ ընդունի: Ասկէ կը հետեւցնեմ թէ քանի որ անոնց մէջ կարծեաց անհամաձայնութիւն կայ, պէտք է նըկատողութեան առնուի այս խնդիրը:

ՏԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ. — Խօսք կ'ուզեմ:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքը ձերն է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնական դի-

տողութիւն ունիմ . թեր ու դէմ փոփոխակի պէտք է խօսուի , մինչդեռ երկու անգամ է որ իրարու վրայ դէմ կը խօսուի , եւ հիմա ալ դէմ խօսողի խօսք կը տրուի :

ԿՐՃԻԿԵԱՆ Յ. ԷՖ.— Կեռ խօսքս չլինցուցի : հօգ չէ թէ որ Ռուսիանէն էֆէնտին համաձայնի , ստորագրէ եւ տեղեկագրերն որոշեն , այն ատեն խնդիրը կը լինայ եւ հարկ չմնար տեղեկագրին ետ տալ :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Յաւալի է որ մեր մէջ ազգային խնդիր մը լուծարանելու ատեն անարգանքներ կը լինին . հիմա փախաղեան էֆէնտին որ սոյն տեղեկագրին տեղեկագրերի պաշտօնը վարած է , տեղեկագրին պարունակութիւնն իւր դիւանին կողմէ ընդունելի է թէ չէ , այդ երկրորդական է , բան մը յիշեցուց . ըսաւ թէ Վերաքննիչ Յանձնաժողովը տեղեկագրեր որոշած է , ինչ հարկ նախաձեռնութեան դիւանին ալ տեղեկագրեր որոշել եթէ այսպէս է տեղեկագրին ետ ուղարկելու եւ նոր տեղեկագրի սպասելու հարկ չմնար : Բայց ցաւելով կ'ըսեմ թէ նախաձեռնութեան դիւանն ինչ ըրած է , բառերու փոփոխութիւն միայն , որ կարեւորութիւն մը չունի . ուրեմն ինչ հարկ կը մնայ նախաքննիչ դիւանաց , քանի որ այսպիսի պաշտօնական խօսքեր կը լսենք . եթէ ժողովը պէտք զգացեր եւ սահմաներ է այդ դիւանները , անոնցմէ եկած խնդիրներն ալ պիտի ընդունի . ապա թէ ոչ պէտք է նախաքննիչ դիւանները վերցուին :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ.— Խօսք կ'ուզեմ . ես ի նպաստ պիտի խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը յայտարարեմ որ առեւանի փախման ժամը հասած է . ուրեմն յաջորդ նստին Օրակարգն ու օրն որոշենք :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Փախաղեան էֆէնտին ինքզինք արգարացնելու առթիւ մեծ գաղտնիք մը երեւան հանց , որուն ուշադրութիւն չեղաւ : Ըսաւ թէ Վերաքննիչ Յանձնաժողովը տեղեկագրերը Օրակարգին մէջ անցած էր , եւ այն նիստին երբ խնդիրը պիտի բացուէր , պարտաւորեցայ դիւանին տեղեկագրերը ստորագրել եւ յանձնել : Ըսել է թէ խնդրոց կարգի տուտար չկայ եւ Կիւանն իւր ձեռքը պատրաստ չեղած խնդիրներ կ'առաջարկէ անցընել Օրակարգին մէջ , այս կը նշանակէ թէ մեր Մայր դիւանին մէջ անկանոնութիւն կայ :

ԶԱՅՆԵՐ.— Այո , այո :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Կ'առաջարկեմ որ յաջորդ նստին ազգային արոց խնդիրն առաջին լինի : Որովհետեւ 15 օրէն Տեառնընդառաջի տօն է , նիստ չենք կրնար ունենալ . հետեւապէս յաջորդ նիստն երեք շաբաթէն ետեւ պէտք է ըլլայ , եւ մինչեւ այն ատեն Համարակալութեան դիւանին տեղեկագրին ալ կը հասնի :

Այս միջոցին Ատենապետ էֆէնտին Ռուսիանէն էֆէնտի կողմէն տամակ մը ստացած ըլլալը յայտնելով կարգաց զայն ի լուր ժողովոյն , որ ահաւասիկ .

« Սահմանադրութեան վերաքննելի կէտերուն ընդհանուր վիճարանութեան մէջ խօսք կը խնդրեմ յաջորդ նիստին մէջ խօսելու պայմանաւ . այսօր տկարութիւն ունիմ : Կը խընդրեմ , խօսից կարգին մէջ արձանագրէք զիս » :
ՌՌՍՈՒՆԵԱՆ

ԶԱՅՆԵՐ.— Ուրեմն Ռուսիանէն էֆէնտին վիճարանութեան պատրաստուած է եւ իրենց տեղեկագրին ետ դառնալուն չսպասեր :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ.— Խօսք կ'ուզեմ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Խօսելու փափաք ունեցող եւ ճիշդ արձանագրութիւն ուղղ եւ ընտփոխան էֆէնտիններուն կ'առաջարկեմ որ տուրքի խնդիրը նախադասելու թողտուութիւն ընեն . վասն զի մինչեւ որ պիտածէի խնդիրն չորոշուի , չենք կրնար երեսփոխանաց խօսքերն ճշդիւ արձանագրելու կարող դիւանագրպիւրներ ունենալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախագահ Սրբազանին առաջարկութիւնը քուէի պիտի դնեմ :

ԶԱՅՆԵՐ.— Ո՛չ . կանոնը կ'աւրուի , Համարակալութեան դիւանին յղուեցաւ տուրքի խնդիրն . անկէ տեղեկագրի չեկած Օրակարգը չանցնիր :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Նախագահ Սրբազանն այնպիսի առաջարկութիւն մ'ըրաւ , որոյ կարեւորութիւնն ու ստիպողականութիւնը կարծեմ եւ ոչ մէկ երեսփոխան մը չկրնար ժխտել . վասն զի ամեն ազգի կառավարութեան հոգին զրամն է . այս զրամի խնդիրը մեր մէջ բարձի թողի մնացած է . կուզանք հոս կ'առաջարկենք , բայց ընաւ խորհող չկայ թէ ինչով պիտի մատակարարուին մեր պաշտօնատան ծախս

քերը , մեր վարժարաններն ու եկեղեցիները : Ուստի ես ալ այս մասին Սրբազան Պատրիարք Հօր հետ համակարծիք ըլլալով կ'առաջարկեմ որ տուրքի խնդիրն առաջին ըլլայ . երեք շաբաթէն չհասնիր ըսողներուն ալ կը պատասխանեմ թէ Սրբազան Հայրը կրնայ Համարակալութեան դիւանին պէտք եղած յորդորներն ընել , որպէս զի իրեն յանձնուած ծրագրին պատասխանը չուտով հասցնէ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Բայց ի՞նչ կ'ուզէք , Համարակալութեան դիւանն՝ որու յըդուեցաւ տուրքի ծրագիրը , ազդեցութեան տակ դնել կ'ուզէք . կարելի է թէ չորս շաբաթ պէտք պիտի ըլլայ իւր պատասխանը տալու համար :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Ըսի թէ Սրբազան Հայրը կ'աշխատի կարելի եղածին չափ շուտ հասցնել տալու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Նախագահ Սրբազանին առաջարկութեան մէջ ստիպողականութիւն կայ թէ ոչ . նախ այս կը հարցնեմ ժողովին :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Քանի որ արոց ծրագիրը Համարակալութեան դիւանին յըդուեցաւ , պէտք է անկէ գալիք տեղեկագրին սպասուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Քանի որ արոց խնդրոյն ստիպողականութիւնը պատճառաբանութեամբ հանդերձ ցոյց կը տրուի , կրնայ նախադասութիւն տրուիլ անոր :

ՇԱՀՊԱԶԵԱՆ Ն. ԷՖ.— Կանոնական դիտողութիւն ունիմ այս մասին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ.— Քանի որ ժողովն իմ առաջարկութեանս ստիպողականութիւնն ընդունելու տրամադիր է , թո՛ղ արձանագրութիւնն այս , եւ Համարակալութեան դիւանին տեղեկագիրը պատրաստուած օրէն թո՛ղ առաջին ըլլայ տուրքի խնդիրը եւ երկրորդ՝ վերաքննութեան խնդիրը :

(Հասնութեան յայտեր)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը ժամանակի եւ մէկ քանի նիստերու կարօտ է , եւ կրնայ ետքի մնալ . եւ օրէնքը կը արամադրէ որ Վարչութեանէն եկած համարատուութիւնները Օրակարգին մէջ միշտ առաջնութիւն ստանան : Ուստի պէտք է որ Կալուածոց դիւանի տեղեկագիրը Սահմանադրութեան վերաքննութեանէն առաջ անցնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Տրոց ծրագիրը կարգացուելէն ետեւ Իւթիւճեան էֆէնտին էր կարծեմ որ առաջարկեց թէ ծրագիրը նախ տպագրեալ երեսփոխանաց հաղորդուի եւ անկէ ետեւ խնդրոց կարգ ըլլայ . արդեօք Համարակալութեան դիւանին տեղեկագրին ալ կանխաւ կարդալու պէտք չունին : Խոչալէս առօրին Օրակարգ կ'ըլլայ :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Անանկ չէ . Վարչութեան ծրագիրն այսօրուան ատենագրութեան մէջ պիտի անցնի , կը մնայ Համարակալութեան դիւանէն գալիք տեղեկագրին : Այսօրուան ատենագրութիւնն ութ կամ տասն օրէն տպեալ ձեռքերնիս կը հասնի , եւ որովհետեւ յաջորդ նիստն երեք շաբաթէն ետքը պիտի ըլլայ , հաւանականաբար Համարակալութեան դիւանն ալ կրնայ մինչեւ այն ատեն իւր տեղեկագիրը բերել , որուն վրայ վիճաբանութիւն ալ պիտի ըլլայ հարկաւ . ի՞նչ արգելք կրնայ ըլլալ առաջնութիւն տրուելուն , մանաւանդ որ Քաղ. ժողովոյ բերած ծրագիրն ձեռքերնիս է եւ արգէն դիտողութիւննիս պատրաստած պիտի ըլլանք :

ՃԻԼԱՃԵԱՆ Պ. ԷՖ.— Իբրեւ Ելեւմտից Հոգաբարձութեան անդամներէն մին հարկ կը համարիմ քանի մը բացատրութիւն տալ այս մասին : Շատ անգամ կեդր. սնտուկն այնպիսի նեղ վիճակի մը մէջ կ'իյնայ՝ որ չկրնար հատուցանելի պարտքերէն մինչեւ անգամ հարկւր դուրուշ վճարել . երբեմն գաւառները դիր դըրելու համար գրագիր չենք գտներ , վասն զի դիւանագրպիւրները քիչ են : Ասոր համար ես ալ Սրբազան Պատրիարքին կը ձայնակցիմ ըսելով թէ ստակի խնդիրն առաջին պէտք է ընել . բայց կանոնին համաձայն պէտք է վարուինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ներքին Կանոնադրութեան համաձայն խնդրոյ մը ստիպողականութիւնը նախ կը նկատուի , եւ ըստ այնմ այն խնդիրը առաջնութիւն կ'ստանայ . արդ տուրքի խնդրոյն ստիպողականութիւն ունենալը ամէն երեսփոխան ճանչցան . կը մնայ վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին խնդիրը՝ որուն վրայ քիչ մը առաջ շատ խօսուեցաւ , յաջորդ նիստին Օրակարգին մէջ Կալուածոց դիւանին տեղեկագրէն առաջ կամ ետքն անցնելու կէտն վերստին որոշել . ուստի այս կէտը քուէի կը դնեմ :
ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Կ'առաջարկեմ վե-

բաքննութեան խնդիրը քննելէ որոշուած ընդհանուր քննութեան անուամբ գրուի , ինչպէս էր յառաջ :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՅ.— Խնդրոց կարգին մէջ արձանագրեալ է Փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան , եւ օրակարգը Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին վրայ ըլլալով , նախընտրեալ նիստին մէջ մոտցուել էր այդ երկուքը մէկէն զննել . այս նիստին կ'ուղղուի :

Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ , եւ Դիւանին անդամոց ձեռնպահութեամբ ժողովն 9 ձայնի դէմ 12 ձայնով ՈՐՈՇԵՑ ըստ առաջնոյն կալուածոց դիւանին տեղեկագիրը նախադասել Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրէն :

Հետեւապէս ժողովը որոշեց յաջորդ նիստին 5 շաբաթէն դուրս ըստ յետագայ Օրակարգի .

1. Ծրագիր ազգային տրոց . (եթէ Համարակալութեան դիւանին տեղեկագիրը հասնի մինչեւ ջաջորդ նիստ .)
2. կալուածոց դիւանի տեղեկագիրը ազգային վանօրէից համարառութեանը վերաբերեալ .
3. Փոփոխելի տրամադրութիւնք Սահմանադրութեան .- Վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագիրը :

Ատենը գոցուեցաւ ժամը 10 ին :

ԱՏԵՆԱԴՊԻՐ
Ս. Գ. Գ. ՓԱՎԱՅԱՆՏ

ԱՏԵՆԱԳԵՏ
Ս. Գ. ԿՈՍԱՆՂ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

Կը ճախոշի ի Դիշանառան Պատրիարքարանի , և կը գտնուշի
Եկեղեցեաց քանկալները .